ՅՆԾՈՒԹՅԱՆ ՕՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Օշական: Նրա հետ էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բռնիայանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու և շրջակայքի ամբողջական բարեկարգումն իրականացավ շնորհիվ ամերիկահայ բարերար Ջիվան Կոբոյանի, որն, ինչպես Վեհափառ Հայրապետը նշեց, գտնվելով հայրենիքից հազարավոր մղոններ հեռու, հայացքը մշտապես հառած դեպի հայրենի երկիր, իր ազնիվ վաստակն էր շաղախել հայրենաշինության գործին:

Գնահատանքի ու երախտագիտության խոսքեր ուղղելով պրն Կոբոյանին՝ Նորին Սրբությունն իր խոնարհումը բերեց երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի հիշատակին, որի նախաձեռնությամբ ու հորդորով պրն Կոբոյանը երկու տարի առաջ հովանավորեց նաև եկեղեցուն կից Ս. Մեսրոպ Մաշտոց Դպրատան կառուցումը:

Նախանձախնդիր աշխատանքի համար Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանին և երեք տարիներ թեմում առաջնորդած Նավասարդ Սրբազանին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱԽՏՈՐՈՇԻՉ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆԸ

Հոկտեմբերի 5-ին Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանում Փենսիլվանիայի Թ. Ջեֆերսոնի անվան բժշկական համալսարանի արտոնագրով ուլտրաձայնային ախտորոշիչ կենտրոնի բացմանը:

Բժշկական այս կենտրոնը, որը նշանակալի ավանդ կունենա հայրենական բժշկագիտության զարգացման գործում, հիմնվել է ամերիկահայ ազգային բարե-

ռար, ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Նազար Նազարյանի և նրա որդի, Ջեֆերսոնի անվան բժշկական համալսարանի պրոֆեսոր Լևոն Նազարյանի հանձնառությամբ:

Շնորհավորելով ներկաներին կենտրոնի բացման առիթով, Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը հայտնեց Նազարյանների ընտանիքին և մասնավորապես Նազար Նազարյանին, որի ազգանվեր գործունեությամբ բազմապիսի ծրագրեր են իրականացվում Մայր Հայրենիքում: Դրն Նազարյանը նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալներից է: Նորին Սրբությունը երախտագիտությամբ նշեց, որ ազգային բարերարի նվիրատվությամբ է իրականացվում նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի Ս. Տրդատ մատուռի կառուցումը:

Դրն Նազարյանին, ՀԲԸՄ-ին և հանդիսությանը ներկա ՀԲԸՄ նախագահ Լուիզ Սիմոն-Մանուկյանին երախտիքի խոսքեր ասացին նաև ՀՀ առողջապահության նախարար Արարատ Մկրտչյանը, համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՄԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԲՐԱՆՍՈՆ ՄԱՔ-ՔԻՆԼԻԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 24 հոկտեմբերի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) գլխավոր տնօրեն Բրանսոն Մաք-Քինլիին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը էական և կարևոր համարեց մարդասիրական այն ծառայությունը, որ մատուցում է ՄՄԿ-ն Հայաստանում և ողջ աշխարհում:

Նշվեց, որ Հայաստանում այժմ բնակվում է շուրջ 400 հազար փախստական, որոնցից շատերը, տեղավորվելով աղետի և սահմանամերձ գոտիներում, գտնվում են առավել ծանր պայմաններում: Դրն Մաք-Քինլին և ՄՄԿ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Նիլիմ Բարուահը Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին փոքր բիզնեսի զարգացման միջոցով փախստականների ինքնահաստատմանն ու ինտեգրմանն ուղղված Հայաստանում իրականացվող կազմակերպության ծրագրերը: Հանդիպման ընթացքում ընդգծվեց նաև անօրինական միգրացիայի խնդրի լուծման կարևորությունը:

Իր հերթին Նորին Սրբությունը հյուրերին տեղեկացրեց սոցիալական այն ծրագրերի մասին, որ մտադիր է իրականացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հայաստանյան բոլոր մարզերում: Այս առիթով հանդիպման մասնակիցները կարևորեցին հետագա համագործակցությունը Եկեղեցու և ՄՄԿ-ի միջև: